# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար միջքաղաքային հեռախոսային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՊԾ-ԷԱՃԾՁԲ-24/06 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի օգոստոսի 12-ին կնքված N ՀՀՊԾ-ԷԱՃԾՁԲ-24/06-1 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի հունվարի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության և «Քրոսսնեթ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2026 թվականի հունվարի 26-ին կատարված փոփոխությունների արդյունքում.

- Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ը փոփոխվել և հաստատվել է ըստ Համաձայնագիր 3-ով ներկայացված Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2024 թվականի օգոստոսի 12-ին կնքված N ՀՀՊԾ-ԷԱՃԾՁԲ-24/06-1 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կողմից ծառայության մատուցման ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության մատուցման ձեռքբերման համար ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայություն**